«Գավառի ավագ դպրոց» ՎԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում
Հետազոտող ուսուցչուհի՝	Արփինե Ստեփանյան
Ղեկավար՝	Ժենյա Միրաբյան

ԳԱՎԱՌ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Ուսուցչի մասնագիտական գործունեության էությունը.....5

1.2 Ուսուցչի մասնագիտական գործունեության հիմնական հատկանիշները..... 8

ԳԼՈՒԽ 2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

2.1 Ուսուցիչ - ծնող համագործակցության նշանակությունն ու կարևորությունը... 13

2.2 Սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ համագործակցության խթանումը կրթադաստիարակչական գործընթացի շրջանակներում 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: *«Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում»* վերնագրով թեմայի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից կրթական համակարգում ուսուցչ-ծնող փոխգործակցության կարևորության ուսումնասիրման, ինչպես նաև այս ձևաչափի համագործակցությամբ երեխայի ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման և ուղիների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Սույն հետազոտական աշխատանքի նպատակը կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության գործընթացում ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ համագործակցության կարևորության արժևորումն ու համագործակցության ուղիների կատարելագործումն է:

Վերոնշյալ նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել ուսուցչի մասնագիտական գործունեության էությունը,
- ներկայացնել ուսուցչի մասնագիտական գործունեության հիմնական հատկանիշները,
- բացահայտել ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների միջև համագործակցության դերն ու կարևորությունը,
- ներկայացնել կրթադաստիարակչական գործընթացում այս ձևաչափով համագործակցության խթանման միջոցներն ու քայլերը:

Աշխատանքի օբյեկտը և առարկան: Հետազոտական աշխատանքի օբյեկտը ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցությունն է, իսկ ուսումնասիրության առարկա՝ ուսուցչի

մասնագիտական գործունեության էությունը, մասնագիտական գործունեության հիմնական հատկանիշները,

Աշխատանքի մեթոդաբանությունը: Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են փաստաթղթերի ուսումնասիրման և էմպիրիկ հետազոտության (դիտման, չափման, համեմատման), ինչպես նաև հարցաթերթիկային հարցման մեթոդները:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից (տեսական և հետազոտական հատվածներից), եզրակացություններից և առաջարկություններից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը՝ 19 էջ:

Գրականության տեսություն: Հետազոտական աշխատանքի շարադրման ընթացքում տեղեկությունների կարևոր աղբյուր են հանդիսացել ինչպես հայ, այնպես էլ ռուս մանկավարժների ուսումնական ձեռնարկները և գիտահետազոտական հոդվածները: Հետազոտական աշխատանքի ընթացքում օգտագործվել են Յու. Ամիրջանյանի[1], Լ. Ասատրյանի[2], Լ. Թորգոմյանի[3], Ռ. Գաբդրահմանովայի[4], Պ. Մակարովի[5] և Ի. Պոդլասայի[6] աշխատությունները:

---

[1] Տե՛ս Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., «Մանկավարժություն» (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2005:

[2] Տե՛ս Ասատրյան Լ., «Մանկավարժություն», Երևան, 2017:

[3] Տե՛ս Թորգոմյան Լ., «Մանկավարժության ընդհանուր հիմունքներ», Երևան, 2005:

[4] Տե՛ս Габдрахманова Р., «Введение в педагогическую деятельность: Краткий конспект лекций», Казань, 2013.

[5] Տե՛ս Макаров П., «Дидактика Дистервега (сущность, содержание, ход обучения)» // Советская педагогика, 1937, № 5 – 6.

[6] Տե՛ս Подласий И., «Педагогика», книга 3, 2-е изд., Москва, 2007.

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Ուսուցչի մասնագիտական գործունեության էությունը

Ժամանակի ընթացքում կուտակված փորձն ու գիտելիքները մարդիկ փոխանցում էին սերունդներին: Հետագայում այս գործընթացների զարգացման արդյունքում ձևավորվեցին տարբեր մասնագիտություններ, այդ թվում մանկավարժ-ուսուցչինը, որոնց հիմնական առաքելությունը հանրությանը որևէ գիտության ուսուցումն էր և նրանց գիտելիքների հարստացումը: Հենց այսպես էլ հասարակության շրջանում ձևավորվեցին բանիմաց, գրագետ, մեծ հարգանք և պահանջարկ վայելող մարդկանց առաջին սոցիալական խմբերը՝ ուսուցիչները, որոնց անմիջական և կարևրագույն առաքելություններից մեկը դարձել էր անձնական փորձի և գիտելիքների փոխանցումը հասունացող, գալիք սերունդներին: Այսպես էլ դաստիարակությունը դարձավ մարդու գործունեության և գիտակցության կարևորագույն ոլորտներից մեկը[7]:

Մանկավարժական մասնագիտության առաջացումը հենց այդ պատճառով էլ ունի օբյեկտիվ հիմքեր: Մանկավարժական մասնագիտության առաջացման հետ մեկտեղ աստիճանաբար ուսուցչին ամրագրվեց դաստիարակության գործառույթը: Ուսուցիչը դաստիարակ, և հենց հասարակության դաստիարակությունն էլ համարվում նրա գլխավոր առաքելությունը: Բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայերը, տարբեր ժամանակներում ունեցել են ականավոր ուսուցիչներ:

Ուսուցչի մասնագիտական գործունեության կարևորագույն և բաղկացուցիչ մաս է հանդիսանում ուսուցման գործընթացը, որը պետք է ընթանա որոշակի կանոններով, ունենա որոշակի ելակետ, առաջնորդվի ինչ-որ գաղափարով: Ինչպես պարզ դարձավ, այս ամենի համար հարկավոր է հիմք և սկզբունք: Ուրեմն կարելի է ասել, որ ուսուցման սկզբունք է կոչվում այն ելակետը, հիմքը, ղեկավարող գաղափարը, որի միջոցով կառավարումն ու կատարումը ապահովում են ուսուցման գործընթացի արդյունավետությունը: Ուսումնական սկզբունքները կառավարում են

[7] Տե՛ս Габдрахманова Р., «Введение в педагогическую деятельность: Краткий конспект лекций», Казань, 2013, с. 6.

ուսուցման գործընթացը, համալիր ձևով լուծում են կրթության, դաստիարակության, զարգացման խնդիրները:

Ուսուցչի մասնագիտական-մանկավարժական առաքելությունը աշակերտների ուսուման, կրթության և զարգացման ապահովումն է: Նրա գործառույթն է ղեկավարել սովորելու և դաստիարակության գործընթացը: Լինելով մանկավարժական գործընթացի կազմակերպիչն ու իրականացնողը նա նախաձեռնություն և ազատություն է տալիս սովորողներին: Ղեկավարման գործընթացի առաջընթացն ապահովելու համար ցանկացած գործընթաց (դաս, օլիմպիադա և այլն) պետք է սկսի և ավարտի ուսուցիչը:

Մանկավարժական գործընթացի գլխավոր նպատակը սպասելի արդյունքին հասնելն է: Կրթադաստիարակչական գործընթացում հաջողության հասնելու համար ուսուցիչը պետք է լավ տիրապետի աշակերտների ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկություններին, ինչպես նաև մտավոր և բարոյական դաստիարակության մակարդակի իմացությանը: Ուսուցիչը պետք է ունենա աշխատանքի ռազմավարություն կրթադաստիարակչական ոլորտում ցանկալի արդյունքի հասնելու համար:

Առանձնացնում ենք ուսուցչի մասնագիտական գործառույթների հետևյալ տեսակները՝

- տեղեկատվական (ինֆորմացիոն) դերակատարություն – ուսուցիչը գլխավոր տեղեկատվության աղբյուրն է սովորողների համար, սակայն ներկայումս սովորողները տեղեկատվություն են ստանում համացանցից և այլ աղբյուրներից;
- ուսուցիչը պետք է լավ տիրապետի իր առարկայի մեթոդիկային, մանկավարժությանը և հոգեբանությանը;
- կազմակերպչական դերը, որն արտահայտվում է աշակերտներին այս կամ այն գործունեության մեջ ներգրավվելով, համագործակցելով իրենց առջև դրված նպատակին հասնելու համար: Ուսուցիչը համագործակցում է նաև ոլորտի այլ մասնագետների հետ՝ փորձի փոխանակման, ինչպես նաև նորամուծությունների ներգրավման համար;

- ստուգողական-գնահատող դերը, որը ոչ միայն աշակերտներ հաջողությունների բացահայտումն ու գնահատումն է, այլև անհաջողությունների և ձախողումների պատճառների պարզաբանումն է:

Նշենք նաև ուսուցչի և աշակերտների հաղորդակցման երեք հիմնական գործառույթները՝

1. *հաղորդակցական*, որը ենթադրում է տեղեկությունների փոխանակում,
2. *ընկալման* (պերցեպտիվ), որը ենթադրում է փոխադարձ ընկալում և ճանաչում,
3. *փոխներգործուն*, որը ենթադրում է համատեղ գործունեության կազմակերպում և իրականացում:

Կարևոր տեղ է զբաղեցնում նաև ուսուցչի հետազոտական և արտահայտչական ընդունակությունը, ուշադրությունը բաշխելու կարողությունը, ինչպես նաև մանկավարժական երևակայությունը: Չենք կարող չանդրադառնալ նաև ուսուցչի անձնային որակներին, որը շատ կարևոր է ուսումնադաստիրակաչական գործընթացում: Մանկավարժական հոգեբանությունն առանձնացնում է քաղաքացիական որակները, մարդասիրությունը, բարյացակամությունը, զգայունությունը, սերը գործի նկատմամբ և այլն: Իսկ մանկավարժական հեղինակությունը դրսևորվում է աշակերտների վրա ուսուցչի ունեցած ազդեցությամբ: Լավ ուսուցիչը ուսումնական գործունեության գլխավոր շարժիչ ուժն է[8]:

Ուսուցչի գործունեության էությունը պարզ կերպով մեկնաբանում է հայ մանկավարժ Յուրի Ամիրջանյանն իր *«Մանկավարժություն»* ուսումնական ձեռնարկում նշում է, որ ուսուցչի աշխատանքը բավականին բարդ ու դժվար է: Այն իր մեջ ներառում է տքնաջան աշխատանքի բոլոր ձևերը, այդ թվում՝ բարոյական հատկանիշների դրսևորումները: Ժամանակին գնահատելով ուսուցչի գործունեությունը, XIX դարի հայ ականավոր մանկավարժ *Խաչատուր Աբովյանը*

[8] Տե՛ս Подласий И., «Педагогика», книга 3, 2-е изд., Москва, 2007, с. 28.

(1809 – 1848թթ.), որպես ուսուցիչ բերում էր իր օրինակը. *«Ես պատրաստ եմ իմ կյանքը զոհել իմ սաների համար»*[9]:

Աբովյանը երեխաներին համարում էր *«աչքի լույս», «թանկագին գոհար»: Նա* պահանջում էր «վերստեղծել» երեխաներին: Շվեյցարացի մանկավարժ *Իոհան Պեստալոցին* (1746 – 1827թթ.) ուսուցչի աշխատանքը համեմատում էր այգեպանի աշխատանքի հետ, որը հոգ էր տանում ծառի մասին, որպեսզի արտաքին որևէ ուժ չվնասի նրա արմատներն ու ճյուղերը: XIX դարի գերմանացի անվանի մանկավարժ *Ադոլֆ Դիստերվեգը* (1790 – 1866թթ.) ուսուցչի գործունեությունը համարում էր արվեստ. *«…որը նման է երաժշտական կամ բանաստեղծական գործունեության»*[10]:

Այսպիսով, ուսուցիչի գործունեությունն իր մեջ է ամփոփում մանկավարժական և դաստիարակչական գործառույթները, որոնց միջոցով վաղ տարիքից սկսած կրթվում են սերունդներ՝ ստանալով առաջնահերթ գիտելիքներ, որոնք արժեքավոր նշանակություն են ունենում մարդու հետագա գործունեության զարգացման համար:

1.2 Ուսուցչի մասնագիտական գործունեության հիմնական հատկանիշները

Ուսուցիչը պետք է ունենա բազմակողմանի զարգացվածություն, լայն մտահորիզոն և ցանկացած պահի, ինչպես հանրագիտակը, հանպատրաստից պատասխանի իր աշակերտների հարցերին: Նա պետք է տիրապետի իր մասնագիտության յուրաքանչյուր տարրին: Ուսուցիչը պետք է ունենա բարձր մասնագիտական որակներ: Եթե երեխաների հանդեպ սերն ու հոգատարությունը տրված է ի վերուստ, այն ձեռքբերովի չէ և անհնար է սիրել սովորել, ապա պրոֆեսիոնալիզմը ձեռքբերովի որակ է, որին մարդը հասնում է աշխատասիրության և գիտելիքների հարստացման միջոցով:

Ուսուցիչն, իր բնույթով, պետք է լինի կենսուրախ, կենսախինդ, պարզ, ուղղամիտ, արդարամիտ, ունենա մեղմ և հավասարակշռված բնավորություն, իր

---

[9] Տե՛ս Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., «Մանկավարժություն» (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2005, էջ 76:

[10] Տե՛ս Макаров П., «Дидактика Дистервега (сущность, содержание, ход обучения)» // Советская педагогика, 1937, № 5 – 6, с. 160 – 180.

աշակերտների միջև առողջ փոխհարաբերություններ, իր սաներին համարի իր լավագույն բարեկամները, ապրի նրանցով, աշակերտին չդիտարկի որպես իր ենթակա, իսկ իրեն՝ տիրոջ դերում: Հայ մեկ այլ անվանի մանկավարժ *Ղազարոս Աղայանը* (1840 – 1911թթ.) ժամանակին ուսուցիչներին խորհուրդ է տվել այցելության գնալ աշակերտներին, իսկ վերջիններիս՝ պատասխանել փոխադարձ այցելությամբ: Նման հարաբերությունները, Աղայանի համոզմամբ, բարձրացնում էին ուսուցչի հեղինակությունը՝ նպաստելով վերջինիս աշխատանքի հաջողությանը[11]:

Ուսուցչի մանկավարժական վարպետությունը մանկավարժի կողմից համապատասխան մասնագիտական գիտելիքների և փորձի հիման վրա մանկավարժական մասնագիտական կարողությունների և ունակությունների արդյունավետ կիրառումն է կրթադաստիարակչական գործընթացում[12]:

Ինչ վերաբերում է ուսուցչի մանկավարժական ընդունակություններին, ապա առանձնացնում են հետևյալ տեսակները՝

- *կազմակերպչական ընդունակություններ* – դրանք արտահայտվում են նրանում, թե ինչպես է ուսուցիչը կարողանում համախմբել աշակերտներին, զբաղեցնում նրանց, գնահատում գործունեության արդյունքները և այլն;
- *դիդակտիկ* կամ *ուսուցողական ընդունակություններ* – որոնք թույլ են տալիս ընտրել աշխատանքի արդյունավետ մեթոդներ և դրանք կիրառել ուսուցման գործընթացում;
- *պերցեպտիվ ընդունակություններ* – դրանք վերաբերում են ուսուցչի հոգեբանական ընդունակություններին: Ուսուցչի զգայուն լինելըարտահայտվում է երեխաների հոգեվիճակը հասկանալու, նրանց վշտակից լինելու մեջ և այլ իրավիճակներում: Երեխան պետք է զգա, որ ուսուցիչը անհանգստանում է թե՛ իր ներկայով և թե՛ իր ապագայով;
- *կոմունիկատիվ ընդունակություններ* – դրանք հաղորդակցական ընդունակություններն են, որոնք արտահայտվում են ուսուցչի,

[11] Տե՛ս Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., նշվ. աշխ., էջ 77:
[12] Տե՛ս Թորգոմյան Լ., «Մանկավարժության ընդհանուր հիմունքներ», Երևան, 2005, էջ 65 – 66:

աշակերտների և նրանց ծնողների միջև: Համագործակցությունը աշակերտների հետ նպաստում է նրանց կրթվելուն և դաստիարակվելուն:

Ուսուցչի գործը մշտապես աճող մարդու կրթությունը, դաստիարակությունն ու զարգացումն է: Աշխարհում ոչ մի գիտություն, բացի այն գիտությունից, որոնք առնչվում են մանկավարժությանը, նման հարցերով չեն զբաղվում: Խոսելով ուսուցչի մասնագիտական գործունեության էության մասին, չենք կարող շրջանցել նաև դրա իրավական կարգավորման մեխանիզմները: Այսպես, 2003թ. նոյեմբերի 12-ին ընդունված *«Ուսուցչի կարգավիճակի մասին»* ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի *(«Ուսուցչի մանկավարժական գործունեության սկզբունքները»)*[13] համաձայն՝

Ուսուցչի մանկավարժական գործունեության ***հիմնական սկզբունքներն*** *են.*

- սովորողի ուսուցման, դաստիարակության և զարգացման նկատմամբ անհատական նպատակաուղղված մոտեցումը;
- ուսուցման և դաստիարակության մարդասիրական բնույթը, սովորողի իրավունքների և ազատությունների, ազգային ավանդույթների, սովորույթների, ֆիզիկական վիճակի նկատմամբ հարգալի վերաբերմունքը;
- համամարդկային բարոյական սկզբունքներին և արժեքներին հավատարմությունը;
- ուղղակի, քողարկված և (կամ) անուղղակի խտրականության, անձնական կամ հասարակական բնույթի հանգամանքներով կամ այլ պայմաններով պայմանավորված սովորողների իրավունքների սահմանափակման կամ արտոնությունների տրամադրման անթույլատրելիությունը;
- սովորողների դաստիարակությունը հայրենիքի նկատմամբ սիրո և քաղաքացու բարձր կոչման հենքով;
- կրթության հաջորդայնության ապահովումը;

[13] Տե՛ս ՀՀ ԱԺ պաշտոնական կայք, «Ուսուցչի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք – http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=489&Reading=0 (ընդունված՝ 12. 11. 2003)

- ուսուցման և դաստիարակության սկզբունքների միասնությունը;
- մատչելիությունը, գիտականությունը, գիտակցականությունը, ակտիվությունը, դիտողականությունը, գիտելիքների կայունությունը, միջառարկայական կապերի ապահովումը;
- գիտության, տեխնիկայի և մշակույթի նորագույն նվաճումների հիման վրա սեփական գիտելիքների անընդհատ կատարելագործումը.;
- սովորողների և նրանց ընտանիքների հետ սերտ համագործակցությունը;
- համագործակցությունը մանկական և երիտասարդական միավորումների, աշխատանքային կոլեկտիվների, ինչպես նաև շահագրգիռ պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ, որոնց գործունեությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արգելված չէ:

Սույն օրենքի 13-րդ հոդվածով *(«Ուսուցչի պարտականությունները»)*[14] սահմանվում են նաև ուսուցչի պարտականությունները: Ուսուցիչը ***պարտավոր*** է՝

- ուսուցումը կազմակերպել բարձր մասնագիտական մակարդակով, ապահովել սովորողների կողմից ուսումնական ծրագրերի յուրացումը պետական կրթական չափորոշիչներին համապատասխան;
- իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքը ծնողների (այլ օրինական ներկայացուցիչների), ավագների, պատմամշակութային արժեքների, պետության նկատմամբ հարգանքի, շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական վերաբերմունքի դաստիարակության ոգով;
- վերահաստատել համամարդկային արժեքների՝ բարության, աշխատասիրության, մարդասիրության, հայրենասիրության, ճշմարտության, արդարության և այլ գաղափարների նկատմամբ հարգալից վերաբերմունքը;

[14] Տե՛ս ՀՀ ԱԺ պաշտոնական կայք, «Ուսուցչի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք – http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=489&Reading=0 (ընդունված՝ 12. 11. 2003)

- մասնագիտական ընդհանուր և հատուկ կրթություն իրականացնելու նպատակով անընդհատ կատարելագործել իր մանկավարժական գիտելիքներն ու հմտությունը;
- հարգել սովորողների պատիվն ու արժանապատվությունը, ֆիզիկական վիճակը;
- նպաստել սովորողների անհատական մշակութային, մարզական և այլ ընդունակությունների զարգացմանը:

Ուսուցչի կողմից իր բարձր սոցիալական առաքելության իրականացումն անհնար է առանց այն մասնագիտական գործառույթների մասին հստակ պատկերացման, որոնց նա կոչված է իրագործել: Եվ անկախ մանկավարժական մասնագիտության ներկայացուցիչների աշխատանքի առանձնահատկություններից, նրանց գործունեության հիմնական էությունն ու գործառույթները կազմում են կրթությունը, դաստիարակությունը և հասունացող սերնդի ուսուցումը:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

2.1 Ուսուցիչ - ծնող համագործակցության նշանակությունն ու կարևորությունը

Ինչպես նախորդ գլխում նշվեց, ուսուցչի մանկավարժական գործունեության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում հատկապես կոմունիկատիվ (հաղորդակցական) ընդունակությունները: Այս տեսակի ընդունակությունների միջոցով ակտիվ և արդյունավետ փոխգործակցություն է ծավալվող հատկապես ուսուցչի և սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցիչների միջև: Նման համագործակցությունը հատկապես դրական է անդրադառնում երեխայի վրա, քանի որ վերջինիս դաստիարակչական և ուսումնական գործընթացին վերաբերող տարբեր հարցերի շուրջ ակտիվ քննարկումներ են իրականացնում վերջինիս ուսուցիչն ու ծնողները:

Մեծ է ընտանիքի դերը երեխաների ուսումնական գործունեության արդյունավետության ապահովման գործում: Ծնողները պարտավոր են վերահսկել իրենց երեխաների ժամանակին դպրոց հաճախելը, տնային հանձնարարությունների կատարումը, անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել տնային հանձնարարությունների կատարման ընթացքում, ապահովեն անհրաժեշտ ուսումնական պարագաներով և ստեղծեն բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ: Շատ կարևոր է դպրոցի և ընտանիքի համագործակցությունը, պահանջների միասնականությունը: Այդ իսկ պատճառով ընտանեկան դաստիարակության մեթոդների ընտրության հարցում շատ կարևոր է դպրոցի աջակցությունը:

Տարբերում ենք ընտանիքի և դպրոցի համագործակցության հետևյալ ձևերը.

- Համադպրոցական և դասարանային ծնողական ժողովները, ինչպես նաև դաստիարարակչական թեմաներով դասախոսությունները;
- ծնողների մանկավարժական լուսավորության ապահովումը, նրանց ներգրավվումը մանկավարժական ուղղվածությամբ պարապմունքներում;
- դպրոցի գործունեության մեջ ծնողների մասնակցության ապահովումը, իմացական, մարզամշակութային միջոցառումների, ինչպես նաև հանդիպումների և բարոյագիտական թեմաներով զեկուցումների կազմակերպումը;

- ծնողական կոնֆերանսները և դաստիարակության արդյունավետ ձևերի փորձի փոխանակումը;
- հատկապես դժվար դաստիարակվող երեխաների ծնողների հետ հաճախակի անհատական զրույցները, խորհրդատվությունները;
- ծնողների մասնակցությունը աշակերտների ուսումնական գործունեությանը՝ պարապմունքներին և առարկայական թեմատիկ երեկոներին մասնակցությունը և այլն;
- աշակերտական գործերի ցուցադրումների կազմակերպումը;
- դասղեկի կապի ծնողների աշխատավայրի հետ;
- ակտիվ փոխգործակցությունը դասղեկի հետ, դասղեկի աշխատանքում ընտանիքի դաստիարակչական հնարավորությունների հաշվառումը:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության արդյունավետ ձևեր և եղանակներ են համագործակցային, ստեղծագործական միջավայրի ստեղծման ձևերի ու միջոցների կիրառումը, դպրոցում հոգեբանական և սոցիալ-մանկավարժական ծառայության ակտիվ գործունեությանը, ընտանիքի՝ դպրոցի հետ համագործակցելու պատրաստակամության դրսևորումը, ծնողների տեղեկացվածությունը դպրոցի և դասարանի կենսագործունեության մասին, տնօրինության և ուսուցիչների կողմից ծնողներին դպրոցական կոլեկտիվի կենսագործունեության մեջ ներգրավելու անհրաժեշտության գիտակցումը: Դպրոցի և ընտանիքի համագործակցություն, երեխաների և նրանց ծնողների փոխգործակցության արդյունավետությունն ապահովվում են դպրոցի կառավարմանը ծնողների ակտիվ մասնակցությամբ, ծնողական համալսարաններում նրանց ներգրավմամբ մանկավարժական գիտելիքների հարստացմամբ[15]:

[15] Տե՛ս Ասատրյան Լ., «Մանկավարժություն», Երևան, 2017, էջ 287 – 288:

2.2 Սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ համագործակցության խթանումը կրթադաստիարակչական գործընթացի շրջանակներում

Հետազոտական աշխատանքի շրջանակներում դիտարկվել են երկու ընտանիք՝ Աբրահամյանները և Մուրադյանները (ազգանունները նշված են պայմանական): Նրանց և դպրոցում սովորող վերջիններիս երեխաների հետ համատեղ կատարված աշխատանքների և փորձի արդյունքում բացահայտվել են մի շարք արժեքավոր տեղեկություններ, որոնք հերթական անգամ վերահաստատել են այն փաստը, որ միայն արդյունավետ եռակողմ (ընտանիք – դպրոց – աշակերտ) փոխգործակցությունը կարող է երաշխավորել սովորողի բնականոն դաստիարակումը, ինչպես նաև դասավանդվող նյութի արդյունավետ յուրացումը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են երկու ընտանիքներին բնորոշ առանձնահատկությունները, որոնք յուրովի (դրական կամ բացասական) կերպով են անդրադառնում նրանց երեխաների ուսուցման և ուսուցանվող նյութի յուրացման վրա:

Աղյուսակ 1. Ընտանիքի ակտիվությունը երեխայի ուսումնական գործընթացին

Գործողություններ	Աբրահամյաններ	Մուրադյաններ
Ծնողական ժողովներին ակտիվ մասնակ-ցություն	միշտ	հաճախակի
Ուսուցչի հետ անհատական խորհրդատ-վություն	պարբերաբար	հաճախակի
Ուսուցչի հետ կապի պահպանում	պարբերաբար	հաճախակի
Երեխայի օրագրի նշումների (գնահատա-կանների) ստուգում	միշտ	երբեմն
Դպրոցում անցկացվող միջոցառումներին մասնակցություն	պարբերաբար	երբեմն

Աղյուսակ 1-ում արտացոլված է երկու ընտանիքների ներգրավվածությունը դպրոցի շրջանակներում տեղի ունեցող գործընթացներին: Ինչպես երևում է,

Աբրահամյանները և Մուրադյանները տարբեր ակտիվությամբ են մասնակցություն ունենում իրենց երեխաների կրթական գործընթացին: Այս առումով պետք է արձանագրենք, որ Աբրահամյանների ընտանիքն, ի տարբերություն Մուրադյանների, համեմատաբար ավելի ակտիվ մասնակցություն է ունենում: Բնականաբար դա կարող է պայմանավորված լինել նաև տվյալ ընտանիքին բնորոշ սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով:

Ընդ որում, հետազոտության երկրորդ մասն ապացուցել է, որ Աբրահամյանների երեխան ավելի բարձր գնահատականներ է ստանում, ավելի շատ է մոտիվացված նոր գիտելիքների ձեռքբերման և բարձր գնահատականներ ստանալու հարցում, քան Մուրադյանների երեխան: Սա վկայում է այն մասին, որ ծնողի կողմից երեխայի ուսման նկատմամբ հետևողական վերաբերմունքը և դպրոցի, առանձին ուսուցիչների հետ ակտիվ կապի պահպանումը միայն դրական կերպով են անդրադառնում աշակերտի առաջադիմության վրա:

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ Մուրադյանների ընտանիքն այդքան էլ բավարարված չէ դպրոցի կողմից իրականացվող կրթական գործընթացից և երեխայի կրթական առաջադիմությունից՝ հիմնական պատասխանատվությունը վերագրելով կրթական հաստատության վրա: Մինչդեռ Աբրահամյանների ընտանիքը նշեց, որ հանդիպում են որոշակի թերություն և բացթողումներ ինչպես դպրոցի, այնպես էլ երեխայի կողմից, որոնք հնարավոր է լինում կարգավորել, շտկել ակտիվ եռակողմ համագործակցության արդյունքում: Աբրահամյանների նման դիրքորոշումը վկայում է այն մասին, որ երեխայի ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցություն ունեցող ծնողներն իրենց հետևողական վերաբերմունքով կարողանում են գրագետ և արդյունավետ կազմակերպել իրենց երեխայի ուսուցումը՝ հնարավորինս բացառելով առկա խնդիրներն ու հանդիպող դժվարությունները:

Աղյուսակ 2-ում ներկայացված են երկու ընտանիքների և նրանց երեխաների միջև համագործակցության մակարդակն ու արդյունավետության պատկերը: Աղյուսակում արտացոլում է երեխայի կողմից իր ծնողի՝ ուսումնական գործընթացին ակտիվ մասնակից դառնալու պատկերը:

Աղյուսակ 2. Ծնող – երեխա համագործակցության մակարդակն ուսումնական գործընթացի շրջանակներում

Գործողություններ	Աբրահամյանների երեխան	Մուրադյանների երեխան
Որքա՞ն հաճախ է Ձեր ծնողը դպրոց այցելում	միշտ	հաճախակի
Որքա՞ն հաճախ է Ձեր ծնողը հանդիպում տնօրենի, դասղեկի կամ ուսուցիչների հետ	պարբերաբար	երբեմն
Ի՞նչ հաճախականությամբ եք Ձեր ծնողներին ներկայացնում Ձեր օրագիրը	պարբերաբար	երբեմն
Որքա՞ն հաճախ է Ձեր ծնողն օգնում տնային աշխատանքներ կատարելիս	հաճախակի	երբեմն

Աղյուսակ 2-ում արդեն ներկայացված են երեխայի գործողությունները, որոնցից ևս կախված է ընտանիք – դպրոց – աշակերտ եռակողմ համագործակցության արդյունավետությունը: Աղյուսակում արտացոլված տվյալները հերթական անգամ վկայում են, որ Մուրադյանների ընտանիքը բավականին թույլ կապ է պահպանում դպրոցի հետ: Միաժամանակ թույլ է կապը ծնող – երեխա օղակի միջև: Մինչդեռ Աբրահամյաններն առավել հաճախակի են ստուգում իրենց երեխայի օրագրի նշումները, գնահատականները, ինչպես նաև հետևում իրենց երեխայի տնային առաջադրանքների կատարմանը:

Այսպիսով, կարող ենք ամփոփել հետազոտության արդյունքները նրանով, որ աշակերտի ուսումնական առաջադիմությունն ու հաջողությունները բխում են ընտանիք – դպրոց – երեխա եռակողմ համագործակցության արդյունավետությունից, որն էլ իր հերթին կախված է կողմերից յուրաքանչյուրի վարքագծից և մասնակցության աստիճանից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, անդրադառնալով ուսուցիչ-ծնող փոխհարաբերության գործոնին, եկանք այն եզրակացության, որ ծնողները մեծ ազդեցություն ունեն ուսուցչի ադապտացիայի գործընթացում, քանի որ հենց ծնողներն են ձևավորում իրենց երեխաների վերաբերմունքը ուսուցչի նկատմամբ: Խոսելով ուսուցչի և նրանից ունեցած սպասումների, ակնկալիքների մասին, պետք է նշել, որ սովորողների ծնողները ուսուցչից սպասում են դաստիարակության և ուսուցման վարպետություն՝ անկախ նրա մասնագիտական ստաժից և տարիքից:

Ուսուցիչների գործունեության մի ամբողջ համալիր վերաբերում է կրթական գործընթացի մյուս սուբյեկտներին, մասնավորապես սովորողների ծնողներին: Ուսուցչի ջանքերի ուղղվածությունը կախված է նրանից, թե ինչպիսի դրույթներ ունի նա ծնողների նկատմամբ՝ վերջիններիցս ձևավորել իրենց երեխաների կրթական գործընթացի համար արդյունավետ օգնականներ կամ երեխաների վրա հավելյալ ճնշման միջոց:

Ելնելով հետազոտական աշխատանքում ստացված եզրակացությունների արդյունքներից, սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության գործընթացի արդյունավետության բարձրացնելու համար առաջարկում ենք.

- Ուսուցիչ – ծնող (կամ սովորողի օրինական ներկայացուցիչ) փոխհարաբերությունները կառուցել ամուր և կայուն շփման, ինչպես նաև սովորողի խնդիրներին երկուստեք օպերատիվ արձագանքման սկզբունքի հիման վրա;
- Ուսուցիչների նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ կազմակերպել սեմինար-քննարկումներ և դրանցում ներգրավել նաև սովորողների ծնողներին (կամ նրանց օրինական ներկայացուցիչներին)՝ այդ կերպ քննարկելով սովորողների մոտ առկա խնդիրները և դրանց լուծման համար անհրաժեշտ քայլերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., «Մանկավարժություն» (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2005:
2. Ասատրյան Լ., «Մանկավարժություն», Երևան, 2017:
3. Թորգոմյան Լ., «Մանկավարժության ընդհանուր հիմունքներ», Երևան, 2005
4. Габдрахманова Р., «Введение в педагогическую деятельность: Краткий конспект лекций», Казань, 2013.
5. Макаров П., «Дидактика Дистервега (сущность, содержание, ход обучения)» // Советская педагогика, 1937, № 5 – 6.
6. Подласий И., «Педагогика», книга 3, 2-е изд., Москва, 2007.
7. ՀՀ ԱԺ պաշտոնական կայք, «Ուսուցչի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք – http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=489&Reading=0 (ընդունված՝ 12. 11. 2003)